ընդ առաջ էին եկել ժողովրդի մեծ բազմութիւն և դպրոցի աշակերտներն իրենց ուսուցիչներով։ Ս. Հայրապետի հանդստութեան համար շքեղ զարդարուած էր Յովսէփ քահանայի տունը, ուր երկու ժամ հանդստանալուց և ժողովրդին օրհնելուց յետոյ՝ ճանապարհ ընկաւ դէպի Մայր Աթոռ։ Վեհափառի կառքին ուղեկցում էին շրջակայ բոլոր գիւղերի տանուտէրները և բազմաթիւ երիտասարդ ձիաւորներ։ Նորին Վեհափառութեան ընդառաջել էին Սինօդի անդամներից Բաբէր, Յուսիկ և Աշոտ վարդապետները, Ճեմարանի կողմից պ. տեսուչը իւր օգնական Արժ. Կարապետ վարդապետի հետ։

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռս ժամանեց ապր. 8-ին, ժամը 4-ին ճաշից յետոյ։ Մայր Աթոռի միաբանութիւնը զգեստաւորուած խաչով, խաչուառով, լապտերներով, Ճեմարանի սանները իրենց ուսուցիչներով սպասում էին մեծ դարբասի մօտ։ Վեհափառ Հայրապետը կառքից ցած իջնելով՝ ամպհովանու տակ մտաւ և թափորը դէպի Մայր տաճարը շարժուեցաւ «Հրաշափառ» շարականով։ Հայրապետը աղօթելուց յետոյ՝ վեհարան մտաւ հանդստանալու։

Հետևեալ օրը Ս. Էջմիածնի միաբանութիւնը Ճեմարանի ուսուցչական խումբը Մեծ. պ. տեսչի հետ ներկայացան Վեհափառ Հայրապետին Նորա օրհնութիւնն ստանալու։

Ս. Յարութեան կիւրակի օրը Աղոիս Վեհափառ Հայրապետը Ս. պատարագ մատոյց Աւագ սեղանի վերայ. պատարագի ժամանակ գեղեցիկ ներդաշնակութեամբ երգում էր Ճեմարանի երգեցիկ խումբը. Նորին Ս. Օծութեան սպասաւորում էին Գեր. Տ. Տ. Մակար, Անանիա և Յովհաննէս Շիրակունի եպիսկոպոսները, երեք վարդապետ և չորս սարկաւագ։

Մեռելոց երկուշաբթի օրը Վեհափառ Հայրապետը մի ազգու քարոզով մխիթարեց ժողովրդին Ս. Գայիանէի վանքում։

Սինօդի նախանդամ Գեր. Տ. Տ. Սարգիս արքեպիսկոպոսը հիւանդութեան պատճառով Վեհափառ Հայրապետի բարեհաճ թոյլտուութեամբ ապաքինուելու համար ուղևորուեցաւ իւր ծննդավայրն՝ Աբարան։

Վեհափառ Հայրապետի հրամանով Արժ. Սիօն վարդապետը նշանակուեցաւ յաջորդ հին Նախիջևանի. արժ. հայրը ապրիլի 14-ին ուղևորուեցաւ իւր պաշտօնատեղին։

Մայիսի 4-ին Ցաճկաստանից Մայր Աթոռս ժամանեցին Տ. Յովսէփ Ծ. վարդապետ Այվազեան առաջնորդ Ռոդոսթայի և Տ. Յովհաննէս Ծ. վարդապետ Արշարունի առաջնորդ Պրուսայի Հայաստանեայց եկեղեցու պետից եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելու։

Մայիսի 4-ին Մայր Աթոռս ժամանեց Աղջուայ սուրբ Ստեփաննոս վանքի վանահայր Արժ. Թադէոս վարդապետ Տ. Նիկողայոսեան։

Ապրիլ 29-ին Մայր Աթոռս էր ժամանել Արժ. Տ. Ստեփան Շիրակունի վանահայր և պահապան Անիի աւերակաց և մայիս 2-ին վերադարձաւ իւր պաշտօնատեղին։

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ։

Ապրիլի 8-ից Մայր Աթոռի Գէորգեան հոգևոր Ճեմարանում սկսուած են քննութիւնները և կվերջանան մայիսի 31-ին։

Տեսչի օգնական Արժ. Տ. Կարապետ վարդապետը հոգևոր Պետի բարեհաճ հրամանաւ իւր առարկաներից նշանակուած ժամանակից առաջ քննութիւն կատարելուց յետոյ Բաղու ուղևորուեցաւ։

— ⁂ —

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Մայր Աթոռի Մատենադարանի համար շնորհակալութեամբ ստացել ենք հետեւեալ գրքերը.

1. Գ. Նիկողայոս Մառից իւր հեղինակութիւնները՝
   ա) Къ критикѣ исторіи Моисея Хоренскаго I. СП. 1898.
   բ) Ани, столица древней Арменіи.
   գ) Изъ поѣздки на Аѳонъ.